Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 30 -ի N 461 - Ն որոշման

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնների համար ներկայացվող մասնագիտական պահանջները:

2. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնների կարող են նշանակվել անձինք, որոնք սույն կարգի 3-րդ կետով նշված մասնագիտություններով կամ դրանց համապատասխանեցված մասնագիտություններով ձեռք են բերել բակալավրի և (կամ) մագիստրոսի որակավորման աստիճան կամ նույն մասնագիտություններով դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով:

3. Մասնագիտություններ՝

1) «Իրավագիտություն».

2) «Տնտեսագիտություն», «Քաղաքագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Ագրոէկոնոմիկա», «Եվրոպագիտություն».

3) «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Ֆինանսներ», «Կառավարում», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Ագրոբիզնես».

4) «Ստորաբաժանումների կառավարում», «Միավորումների և զորամասերի կառավարում», «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում», «Ոստիկանական գործ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 30-ի N 461- Ն որոշման

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

NN ը/կ	Ծառայության բնույթը	Մասնագիտությունը
1.	Անվտանգության ապահովում	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
2.	Պահպանության ապահովում	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
3.	Հատուկ նշանակություն	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
4.	Ուղեկցումներ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
5.	Ներքին անվտանգություն	Իրավագիտություն
6.	Շտաբ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
7.	Օպերատիվ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
8.	Հերթապահություն	ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ